



ՍՈՒՐՔ ՅԱԿՈՒՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

ՎԵՐԱՓՈՒՈՒՄՆ ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒԾԱԾԱՐ

12 ՕԳՈՍՏՈՍ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցում	Էջ 2

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ, մօրդ արգանդէն քեզ պատրաստեց, ո՛վ կրներու գեղեցկագոյնը. մայրդ անթերի ծնաւ քեզ:

Տէրը ստեղծեց եւ հաստատեց քեզ ...

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԷՆ

(4.9-15, 9.6)

Փ Եսան.

Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս գրաւեցիր մէ՛կ նայուածքով, վզիդ շնորհալի մէկ շարժումով:

Ի՛նչ զգլխիչ է սէրդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն աւելի քաղցր է սէրդ՝ գինիէն, եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս, մեղր ու կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս, փակուած պարտէզ, կնքուած աղբիւր:

Նռնենիներու դրախտ մըն ես դուն ամենէն ընտիր եւ բուրբումնաւէտ տունկերով՝ հինայ ու նարդոս, նարդոս ու քրքում, խնկեղէգ ու կինամոն, եւ խնկաբեր բոլոր ծառերով՝ զըմուռս ու հալուէ, եւ ընտիր բոլոր խնկենիները:

Բուրբումնաւէտ աղբիւրն ես. կեանքի ջուրն ալ, որ Լիբանանէն կը բղխի:

... Բուրբումնաւէտ աղբիւրն ես. կեանքի ջուրն ալ...

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(7.10-16)

Դ արձեալ, Տէրը այս պատգամը զրկեց Աքազի, ըսելով. «Տէր Աստուծմէդ քեզի համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ երկինքի բարձունքէն»: Աքազ պատասխանեց. «Ո՛չ, զԱստուծ չեմ փորձեր»:

Այն ատեն Եսայի ըսաւ.

«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ր բաւեր որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք, որ կը փորձէք Աստուծոյ համբերութիւնը եւս

հատցնել: Ծիշդ այդ պատճառով Տէրը ի՛նք հետեւեալ նշանը պիտի տայ ձեզի.- Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «Էմմանուէլ»

պիտի կոչէ: Անիկա կարագով ու մեղրով պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին անիկա բարին ընտրել ու չարը մերժել չսորված՝ երկու երկիրներն ալ, որոնցմէ դուն կը վախնաս, իրենց

Կոյսը պիտի յղանայ եւ զաւակ մը ծնի, որ «Էմմանուէլ» պիտի կոչէ:

Թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու երկիրդ պիտի փրկուի»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐՈՒՆԳ ԳՐԱԾ
ՆԱՄԱԿԷՆ
(3.29-4.7)**

Ապա, ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝ կը նշանակէ թէ Աբրահամի զաւակներ էք եւ պիտի ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէք նաեւ, թէ ժառանգորդ մը թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս է՝

տարբերութիւն չունի ծառայէ մը, քանի խնամակալներու եւ հոգաբարձուներու ենթակայ է, մինչեւ հասնի իր հօրը որոշած ժամանակակէտը: Նոյնն է մեր ալ պարագան: Որքան

ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց

հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհ զրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը ծնաւ եւ Մովսիսական Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ

որդիներ դարձնէ: Արդ, որովհետեւ իր որդիներն ենք՝ Աստուած մեր սիրտերուն

մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: Ուստի, այլեւս ծառայ չէք, այլ որդի. եւ քանի որդի էք՝ Աստուծոյ խոստումը պիտի ժառանգէք:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(2.1-7)**

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիրենիոսի օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլիայի Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ Թագաւորի ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝ Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց համար տեղ չկար:

ՏՆՕՐՀՆԷՔ
Տնօրհնէք փափաքող ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Քնյ. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիւին:

Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ոյժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք:

... Աստուած մեր սիրտերուն մէջ զրկեց իր Որդիին Հոգին, որով զԱստուած «Հայր» կը կոչենք: